# ՊԱՏՐԱՍՏ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՇ

Ահա մի քանի քայլեր, որոնք կարող եք կատարել, որպեսզի պատրաստվեք Երիտասարդ տղամարդկանց կամ Երիտասարդ կանանց ծրագրերի համար: Կարո՞ղ եք անընդմեջ չորս ստանալ:









| | | | |
|---|---|---|---|
| Պատրաստեք էջանիշ ձեր սուրբ գրությունների համար: | Խոսեք մեկի հետ, ով գուցե անհանգստացած է Երեխաների միությունը թողնելու կապակցությամբ: | Կախեք ձեր սիրելի սուրբգրային հատվածը տանը: | Ձեր վկայությամբ կիսվեք որևէ մեկի հետ: |
| Խնդրեք ձեր եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից *Երիտասարդներին զորացնելու համար. Ընտրություն կատարելու ուղեցույց*-ի մի օրինակ: | Զարդարեք մի հուշատետր՝ դասին տանելու համար: | Ազատ տարածություն | Շնորհակալական մի երկտող գրեք Երեխաների միության ուսուցչին: |
| Կարդացեք տաճարային երաշխավորագրի հարցազրույցի հարցերը: (Դուք կարող եք գտնել դրանք էջ 37 2022 թ.-ի *Ընկեր*ամսագրում:) | Հարցրեք որևէ մեկին, թե ինչպիսին է Երիտասարդ տղամարդկանց կամ Երիտասարդ կանանց ծրագիրը: | Խնդրեք մի դասընկերոջ ձեզ հետ քայլել դեպի ձեր նոր դասարանը: | Գրեք, թե ինչ եք ակնկալում Երիտասարդ տղամարդկանց կամ Երիտասարդ կանանց միություններից: |
| Ծանոթացեք Երիտասարդ կանանց կամ Երիտասարդ տղամարդկանց որևէ ղեկավարի հետ: | Գրեք երեք բան, որ կկամենայիք սովորել Երիտասարդ տղամարդկանց կամ Երիտասարդ կանանց դասերին: | Կարդացեք հոդվածներ *Երիտասարդներին զորացնելու համար* ամսագրում: | Հարցրեք ձեր նոր ղեկավարին դասի միջոցառումների մասին: Գրի առեք դրանք ձեր օրացույցում: |

НԿԱՐՆԵՐԸ՝ ՔՈԼԻՆ ՄԱԴԵՆԻ

## ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼ ԴԵՊԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԽՈՒՄԲ




ԴՈՒՔ 12 ՏԱՐԵԿԱ՞Ն ԵՔ ԴԱՌՆՈՒՄ ՀԱՋՈՐԴ ՏԱՐԻ: ԱՀԱ ՈՐՈՇ ԲԱՆԵՐ, ՈՐՈՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԺԵ ՈԳԵՎՈՐՎԵԼ:

**Նոր ամսագիր**
*Երիտասարդներին զորացնելու համար* ամսագիրը նման է *Ընկեր* ամսագրին, բայց Երիտասարդ տղամարդկանց և Երիտասարդ կանանց համար է: Այն լի է ողջ աշխարհի երիտասարդության մասին պատմություններով, որոնք ձեզ նման հետևում են Հիսուս Քրիստոսին:

**Ընտրություններ կատարելու ուղեցույց**
*Երիտասարդներին զորացնելու համար. ընտրություններ կատարելու ուղեցույցը* գրքույկ է, որը կարող է օգնել ձեզ ընտրել ճիշտը: Այն ունի հարցեր և պատասխաններ, որոնք կօգնեն ձեզ, որ հետևեք Հիսուս Քրիստոսին և պատրաստվեք գնալու տաճար:

**Լրացուցիչ վարժություններ**
Երիտասարդ կանանց և Երիտասարդ տղամարդկանց խմբում դուք կարող եք ձեր ծխի կամ ճյուղի մյուս երիտասարդների հետ կատարել զվարճալի միջոցառումներ: Դուք կարող եք նաև շարունակել նպատակներ դնել Երեխաների և երիտասարդների ծրագրի համար՝ նոր բաներ սովորելու և ձեր տաղանդների վրա աշխատելու համար: